Արձանագրություն N 18/16-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/16" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք. Երևան 20 նոյեմբերի 2018թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Բ. Գրիգորյան,
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Վ. Դեխտյարով,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Վ. Դանիելյան, Ա. Պետրոսյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀՄ)՝	Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվելիք Եզրակացության գնահատում:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից սահմանված ժամկետում տեղեկատվություն չի ստացվել. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 44-րդ կետը՝ Մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հրավերի հավելված NN 6 և 6.1): Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում թիվ 18/16-3

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Եռակցման ինստիտուտ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Բ. Գրիգորյան

Անդամներ՝ _____ Վ. Դեխտյարով

_____ Վ. Դանիելյան

_____ Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Բաղրամյան